

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ  
ԵՎ ՄԵՐ ԶԵՇԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ\*



Մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանը հրատարակեց Կարինի Սանասարյան վարժարապետության ձեռագրացուցակը (Վիեննա, 1910 թ.), Հ. Հ. Քույյանը և կազմեց նույն Սանասարյան վարժարապետության ձեռագրակից հետո մուտք գործած ձեռագրերի ցուցակը, որը լույս տեսավ վերջերս «Հանդես ամսօրյա»-ում; Նույնպես Հ. Հ. Քույյանը 1912 թվականին կազմել էր նաև Կարինի Արծնյան վարժարապետի, ինչպես նաև Կարինի գյուղերի ձեռագրացուցակները, որոնք դարձյալ վերջերս լույս տեսան «Հանդես ամսօրյա»-ում և այլն:

Արևմտահայ աշխարհի հայերեն ձեռագրերի ծանոթացման գործում որոշ դեր են խաղացել նաև «Բյուզանդիոն», «Արևելք», «Բյուրակն», «Էլույս» (Կ. Պոլիս), «Արևելքան մամուլ», «Դափնի» (Զմուռնիա), թերթերն ու հանդեսները և հատկապես «Արարատ» (Վաղարշապատ), «Հանդես ամսօրյա» (Վիեննա), «Բանասեր» (Փարիզ) հայագիտական պարբերականները:

Ամփոփելով մեր խոսքը, պետք է նկատել, որ մեծ եղեռնին նախորդող տարիներին, ոչ միայն շարունակվում էր նախորդ դարի վերջում սկսված ձեռագրերի նկատմամբ ցուցակներով մեծ հետաքրքրությունը, այլև բազ-

մաթիվ հայ մշակներ, ի գին ամեն զոհողության, ձգտում էին ավելի մոտիկից հաղորդվել մեր գեռես շուտումնասիրված հազարավոր ձեռագրերի հմայքին: Սկսում են կազմվել մեր խոշոր հավաքածուներից մի քանիսի գիտական ձեռագրացուցակները: Ավելին, Արևմտայան Հայաստանի ձեռագրերի օժանդակությամբ, աշխատանքներ են տարվում նաև հայ մանրանկարության և հայ հնագրության վերաբերյալ կարելոր գիտական գործեր ստեղծելու ուղղությամբ (Գ. Վ. Հովսեփյանց), և կամ հայկական մի մատենագիտություն գրելու և աշխարհով մեկ սփոված հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակը կազմելու համար (Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան), ինչպես նաև հայ վանքերի պատմությունը ուրվագծելու (Տըրդատ եպիսկոպոս Պալյան, Գեղամ Տեր-Կարապետյան) և այլ գործերի համար:

Արևմտայան Հայաստանի ձեռագրերի ուսումնասիրումը, որ սկսել էր հետզետե լավ հիմքերի վրա դրվել, դժբախտաբար շկարողացավ ավելի մեծ արդյունքների հասնել:

Հայարձնակ գավառներում գտնվող հայերեն ձեռագրերը ինամբով պահպանելու և նրանց թեկուզ համառոտ ցուցակները ունենալու մասին, 20-րդ դարի սկզբում հատկապես Պոլսահայ թերթերում, լույս են տեսել մի շարք հոդվածներ: Նրանցից առանձնապես ուշագրավ է լեզվաբան-բանասեր, 1915

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ-Գ-Դ-Դ հայ:

թվականի մեծ եղեռնի նահատակ Հովհաննես Գաղանցյանի «Ձեռագիրները զավառերու մեջ» հոդվածը, հրատարակված 1901 թվականին Կ. Պոլսի «Արևելք» թերթում: Նկատի ունենալով գավառների մեջ գտնվող հայերեն ձեռագրերի մեծ թիվը և նրանց անմիտար վիճակը, Հ. Գաղանցյանը իր հոդվածում գրում էր. «Եղեռագիրներու կարևորությունը մատնանիշ ընելով կուղեկի անգամ մըն ալ հիշեցնել, թե մեր գավառական վանքերու ու եկեղեցիներու դարակներուն մեջ կարծվածեն շատ ավելի պատկառելի թիվ մը կա (ընդգծումը մերն է—Ս. Ք.) անոնցեմ՝ փոշիներու տակ ժամկետած, ամբողջ մատենագրական հարստություն մը, գանձ մը ինքնին, որ օրե օր փշանալու, ոչնչանալու վրա է»:

Նույն հոդվածի շարունակության մեջ, Գաղանցյանը հրամայական պահանջ էր ներկայացնում ձեռագրերի ոչ միայն լավ պահպանման, այլև նրանց ցուցակագրման մասին: «Նույնիսկ շատ տեղեր, խորհված չէ անոնց մեկ պարզ ցուցակն իսկ ունենալ: Զգենք Հայր Տաշյանի պես մանրամասնորեն ցուցակագրելը, գոնե յուրաքանչյուր ձեռագրի ձեռագրված թվականը և տեղվորը պարզ ցուցակագրություն մը ընելը իր կարենությունը պիտի ունենար և դժվար գործ մըն ալ պիտի ըլլար»:

Գաղանցյանը, ավելի գործնական քայլերի վրա զնելու նպատակով այս անհետածգելի և հույժ կարենոր գործը, նշում էր, որ այս տողերը գրելով, նպատակ է ունեցել Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի ուշադրությունը գավառական եկեղեցիներում և զանգերում գտնվող ձեռագրերի վրա դարձնել Առաջարկում էր շրջաբռականները ուղարկել ամեն տեղ, ձեռագրերի կարենությունը շշշտելով և նրանց ժամանակը և այլ պարագաները ցուցակագրելով: Նույն ժամանակ անհամեցած էր գտնում կազմելի ցուցակները կենտրոնացնել Պատրիարքարանում, այդպիսով վերջինս հնարավորություն կարող էր ունենալ նախ ճանաչելու գավառներում գտնվող ձեռագրերի արժեքը, ուշադրություն դարձնել նրանց վրա, արգելել նաև արդեն իսկ սկսված նրանց վաճառքի գործը, և կամ վերցնել հույժ կարենությունը իր հսկողության տակ: Գաղանցյանը, արդար կերպով մտահոգվելով մեր գոշագրերի ճակատագրով, իր հոդվածը եղրափակում էր սրտացավ խորին մտահոգությամբ. «Վերջապես բան մը ընել պիտք է այդ ձեռագրներուն համար, ամեն օր որ կանցնի ապահով եղեք, որ իր հետ բան մը կտանի, կիշացնե անոնցմեն: Մեղք են, հարգը գիտնանք անոնց, գեթ ձեռքի տակ եղածները փրկենք: Երանի, թե այս մի քանի տողերս

արձագանք գտնեին անոնց քով, որոնք բան մը կրնան ընել այս մասին»<sup>42</sup>:

Հովհաննես Գաղանցյանը անձամբ ինքն էր տալիս գավառի ձեռագրերը ցուցակագրելու ազնիվ մի օրինակ, իր հոդվածում հայտնելով այն մասին, որ ինքն արդեն եղողության վանքերի և եկեղեցիների ձեռագրերի ցուցակագրությունը կատարել է:

Աշյան տեսանք, մինչև 1915 թվականին բավական թվով գավառի ձեռագրերը թեև ցուցակագրվեցին հայ նվիրված առանձին մշակների կողմից, սակայն չգիտենք, թե ի՞նչ կատարեց նույն ժամանակաշրջանում Կ. Պոլսի Պատրիարքարանը այս ուղղությամբ:

Համենայն դեպս, մեզ հասած ցուցակների թվից դատելով, կարող ենք ասել, որ գավառների հայկական ձեռագրերի ցուցակագրման գործը կատարվեց միայն շնչին շափով: Թեև պիտք է նկատել, որ կազմված ցուցակների մի մասն էլ կարող է ոչնչացած լինել մեծ եղեռնի ժամանակի, այնպես, ինչպես մեզ ոչինչ հայտնի չէ Հ. Գաղանցյանի վերոհիշյալ ցուցակի գործության մասին: Սակայն և այնպես, Գաղանցյանի նկարագրած վիճակը դեռևս 1908 թվականին այնքան էլ փոխված չվետք է լիներ, քանի որ Հայերեն ձեռագրերի հայտնի խուզարկու Տրդատ եպիսկոպոս Պալյանը, երբ 1908 թվականին Կ. Պոլսի «Բյուզանդիան» թերթում հրատարակում էր «Հայերեն ձեռագրի ավետարանք թ—ԺԵ գարերու հոդվածաշարը, վերջում գրում էր. «ԺԵ գարեն այսպես 15 Ավետարան հազիվ պատահած ենք, կկարծենք թե, դեռ պիտի ըլլան այս դարուն պատկանող ուրիշ Ավետարաններ ալ, բայց ո՞վ գիտե, որ վանեի և ո՞ր եկեղեցին անկյուններ մնացած են և կամ ո՞ր անհատի բով (ընդգծումը մերն է—Ս. Ք.)<sup>43</sup>:

Այս տողերից ակներև է դառնում, որ մեր ցրված ձեռագրի գանձերի արժեքի և թվի մասին գեռևս ոչ մի ճշգրիտ պատկերացում չկար: Մեր վանքերի ու եկեղեցիների պատերի մեջ մնացած հազարավոր ձեռագրերը, որոնք անծանոթ էին հայագիտությանը, սպասում էին գուրգուրուտ ձեռքերի և փոշիների առջև համբերատար կըող մարդկանց շերմեռանդ աշխատանքին, սակայն դժբախտար այդպիսիների թիվը շատ քիչ եղավ: Այսպիսով, մեր ձեռագրերի գոյությունը շարունակեց մնալ նույն անորոշության մեջ, մինչև որ վրա հասավ մեր ժողովրդի սահմընկեցուցիչ եղեռնը, բոլոր հայացինց

<sup>42</sup> «Արևելք», Կ. Պոլսի, 1901 թ., № 4571, էջ 1.

<sup>43</sup> «Բյուզանդիան», Կ. Պոլսի, 1908 թ., № 3557, էջ 4.

անդներից ամենասարսափելին, որին զոհ կացինք մեր ժողովրդի կեսը, իսկ մեր մշակթի արժեքների մեծ մասը՝ ավալեաթների, էնվերների և ջեմալների պրքիան շատ բանով հետ թողեց և մի քայլսով գերազանցեց Արդուշ Համիդի բուժագնությունները, թաշեաթ փաշան այդ ամին խրիստալով ասել էր օտար դեսպանին, թե այն, ինչ Համիդը 30 տարվա թագքում հայերի նկատմամբ չէր կարողաց անել, ինք կատարեց միայն երեք ամել:

Ինչպես մարդկային զոհերի, այնպես էլ ակութային կորուստների թվով մեծ եղեռեղակի տեղ գրավեց մեր ժողովրդի գողթաների պատմության մեջ։ Այս անդամ ահատակության և ոչնչացման մեծ բաժին կավ նաև հայ հոգեռականությանը և հայ անքերին ու եկեղեցիներին։

Հայկական մեծ եղեռնի գլխավոր զահճական թալեաթ փաշան ամենից ավելի վատանավոր էր համարում հայ հոգեռականության ոյությունը և ամենադաժան միջոցներով բանց ոչնչացումն էր պարտադրում իր սառադասներին։ 1915 թվականի դեկտեմբերի ին Թալեաթի կողմից Հայկափ նահանգայիտին տրված ծածկագիր նրամանում առում էր. «Զնայած այն բանին, որ ամենից առաջ անհրաժեշտ է ոչնչացնել հայ հոգեռականությանը (ընդգծումը մերն է—Ս. Գ.), Դեղ տեղեկություններ են հասել, որ առանձին հոգեռ անձինք ուղարկվել են այնպիսի շասկածելի վայրեր, ինչպես Սիրիան և Երուաղեմը։ Նման դիշումները աններելի զանառություններ են։ Այսուր նրանց համար պետք է նշանակի միայն ոչնչացում (ընդգծումը մերն է—Ս. Գ.): Ես խորհուրդ եմ տալիս դործել զրան համապատասխան»<sup>44</sup>։

Հայ հոգեռականության մարտիրոսությանը հաջորդում էր հայկական բոլոր հուշարձանների կողոպուտը, այրումը և մեծ մասամբ նրանց հիմնահատակ կործանումը։ 1895—1896 թվականների կոտորածների ժամանակ, հայրուրավոր եկեղեցիներ և վանքեր քանդվեցին կամ ծանր վնասներ կրեցին։ Նրանցից ոչ բոլորն է, որ մինչև 1915 թվականը հարավոր եղավ վերանորոգել։ Եվ աշա մեծ եղեռնի ժամանակ դեռևս կանգուն և գործող բազմաթիվ տաճարներ, որոնք դիմացել էին երկար դարերի անպատմելի փորձությունների, կործանվեցին և նրանցից շատերի հետքերն իսկ իսպառ

ջնջվեցին։ Գերմանացի հայասեր դոկտոր Յոհաննս Լեփսիուսը իր «Հայաստանի շարդերը» գործում գրում էր, թե «1000-է ավելի եկեղեցիներ ամայացված են։ Անոնք փոխված են մզկիթներու, երբ չեն գործածվիր հասարակ նպատակներու, կամ թե ավերակի վերածված են»<sup>45</sup>։ Սակայն եղեռնի տարիներին կողոպուտված և հրկիվված մեր եկեղեցիների և գանքերի ընդհանուր թիվը հասնում է շուրջ 2 150-ի, իսկ նահատակված քահանաներին՝ շուրջ 4 000-ի։

Նույն ժամանակի, որոշվել էր նաև ամեն մի հայկական հետք հիշեցնող կոթող ոչնչացնել։ Փաստերը այնքան շատ են անգամ գերեզմանաբարելիք ոչնչացման կամ նրանցով զորանոցներ և այլ շենքեր կառուցելու մասին, որ մենք հանարավորություն շունենք այդ համատարած երևույթը մասամբ արձանագրելու։ Նույն վերաբերմունքին ենթարկվեցին նաև մեր գրչադիր անգին մասյանները, չէ՞ որ նրանց մեջ էին բյուրեղացած հայ միաբնությունը ու հայ արվեստը։

Յավետարակը ձեր ձեռնեն պիտի առնենք» (ընդգծումը մերն է—Ս. Գ.), — ասել էր հայերին երիտասարդ թուրքերի ծովային մինստր Զեմալ փաշայի փոխանորդ Ֆախրեդդին փաշան կիլիկիայում<sup>46</sup>։ Եվ այդպես էլ արվեց, կողոպուտի ու ավերի ենթարկված մեր վանքերն ու եկեղեցիները, որ մոլեռանդ խուժանի կողմից մզկիթի էին վերածվում և ուր մոլաները սկսում էին զուրան կարդալ, այլևս նրանց մեջ չէին կարող հանդուրժել հայկական սրբազն մատյանների գոյությունը և նրանց անարգում, պղծում և հազար ու մի կտորի էին վերածում։

Եվ եթե այս ահավոր նախճիրից հրաշրու փրկվեցին էլ որոշ թվով հայերեն ձեռագրեր, նրանց մեծ մասը պարտական ենք մեր ժողովրդի անձնագործ զավակներին, որոնք ամեն ինչ թողած և բազմիցս մահամերձ վիճակում կարողացան աղատել իրենց նախնիների սրբությունների փշրանքների։

Հայրենի հողից արմատախիլ արվեց մի ամբողջ ժողովուրդ իր բոլոր ստեղծագործությունների հետ միասին։ «Մարդու գործն է միշտ անմահ», — ասում է մեր մեծ բանաստեղծը։ Սակայն դեպի կոտորվելու գնացող մեր ժողովրդի հետ գեղի մահ գնացին նաև նույն ժողովրդի դարավոր ստեղծագործությունները։ Հեղինակի մահից հետո ոչընչացնել նաև նրա հիշատակը, իսկապես որ կրկնակի մահ էր մեզ համար...։

<sup>44</sup> Ե. Պ. Ասրագյան, «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թ. թ.», Երևան, 1964 թ., էջ 259—260։

<sup>45</sup> Դոկտ. Յոհաննս Լեփսիուս, «Հայաստանի շարդերը», թարգ. Մ. Շամտանճյան, Կ. Պոլիս, 1919 թ., էջ 314։

<sup>46</sup> Պ. Տոնապետյան, «Զայե տառապելոց», Փարիզ, 1922, էջ 289—290։

Մեծ եղենի ընթացքում ոչնչացված հայկական կենտրոններից գրված զեկուցագրեր, ինչպես ասացինք, իսպառ բացակայում են: Ես ինչպես կարելի է այդ մասին մտածել իսկ, երբ ծրագրված էր ոչ մի կենդանի հայ շրողնել երկրի երեսին և նրա հետ վերացնել նաև հայկական զատը: Ոչ ոք չկար, որ կարողանար երեմիական ողբերով մեր խաչված բաղաքների անէացման ձայնը լսելի դարձնել նրա հարազատ որդիներին: Մի ժամանակ էր այդ, երբ չեր թուլատրվում նույնիսկ երեխաններին կառել իրենց ծննդավայրի տան փլատակներին, այլ միայն հրամայվում էր նրանց ևս միացնել տառապյալների խմբին և տանել դեպի անապատներն ու դեպի անէություն:

Մեր ձեռագրական խոշոր հավաքածուներից մի քանիսի ձեռագրացուցակները միայն հրաշբով փրկվեցին, սակայն նրանց մեջ նկարագրված ձեռագրերը ոչնչացան: Այսպիսով մեր ձեռքում մնաց մեր գանձերի, այն էլ շատ փոքր մասի, մի քանի հաշվեմատյանները միայն: Սա դեռ բախտավորություն էր, չէ՞ որ հազարավոր ձեռագրեր, որոնք մեր ժողովրդի պատմական ճակատագրի և ստեղծագործ մտքի ամենապերճախոս վկաներն էին, անհետ կորան ու մոխրացան, իրենց հետ տանելով դարերի գաղտնիքը....

Ինչպես մեր մշակույթի բազմազան արժեքների, այնպես էլ մեր ձեռագրական կորուստների շափի մասին, ստուգ ոյին լգիտենք, քանի որ, ինչպես նշվեց, մենք մինչև 1915 թվականը չկարողացանք մեր ձեռագրի գանձերի ընդհանուր հայելին ունենալ, թիե մարդ չգիտի իր կորստյան արժեքի և շափի մասին, թվում է, թե մարդու վիշտը ավելի թեթև է լինում, բայց երբ մտածում ես, թե ինչքան նշանավոր և կարելոր գրական հուշարձաններ մեզ չեն հասել և սակայն այդ բոլորը կարող էին լինել մեծ եղեննի ժամանակ պատառութած կամ այրված գրչագրերում, վիշտդ ավելի քան կրկնապատկվում է:

Շատ դժվարին և տիսուր գործ է գրել մեծ եղենի ընթացքում մեր կրած ձեռագրական կորուստների մասին, երբ մանավանդ գործ ունես անորոշության հետ, չգիտես նրանց թիվն ու արժեքը, որպեսզի նշես, թե ի՞նչ ես կորցրել:

Ուստի մեր պրապումները այս ուղղությամբ ինչքան էլ երկար լինեին, նշված պատճառների հետևանքով, եղած արդյունքները երբեք էլ մենք ամբողջական համարել չենք կարող: Այնուամենայնիվ կարծում ենք, որ առանց այսին թեկուց թերի մի գործ գրելու, հնարավոր էլ չի լինի մոտ պատճյում գրել կատարյալի մոտեցող մի աշ-

խատություն, որը և բաղկացուցիչ մասը դառնա հայ ժողովրդի ձեռագիր գանձերի ոչնչացման և փրկության դեռևս շգրված ընդհանուր պատմությանը:

Այժմ, մեր ձեռքի տակ եղած փաստերի հիման վրա, տեսնենք, թի ինչպիսի կենարոններում մոտավորապես ինչքան ձեռագրեր ենք զո՞ւ տվել 1915 թվականի մեծ եղեննին, և մեր ձեռագրական ժառանգության ո՞ր մասն է փրկվել ու մեզ հասել:

Մեր ձեռագրական մշակույթի ամենախոշոր կենարոններից մեկն է աղել Վասպուրականը, իր այնքան բազմաթիվ ու հարուստ գրչության կենարոններով: Զեռագրերի ընդորինակման նշանավոր վայրեր էին դարձել կառուցի, կիմի, Վարագի, Մեծօփի և հատկապես Աղթամարի վանքերը: Զեռագրերի ստեղծման գործում իրենց ավանդն են մուծել հարյուրավոր ժրաշան և անձնազո՞ւգիչներ, ժաղկողներ, և կազմողներ: Վասպուրականի գրչության մասին խոսելիս, անհնարին է մոռանալ հատկապես հայ զրիներից ավագագույնին և ամենաբեղմնավորին՝ արմիշեցի Հովհաննես Մանգասարենցին (1419—1505), որը 14 տարեկանից մինչև 86 տարեկան հասակը, 72 տարի շարունակ, նվիրվել է հայ գրչության զարգացման սրբազն գործին և ընդօրինակել է 132 մեծ և փոքր ձեռագրեր<sup>47</sup>: Սակայն նա միայն չէր, նրա նման իրենց ամբողջ կյանքը նվիրվել էին ձեռագրական գործին Գրիգոր

<sup>47</sup> Հովհաննես Մանգասարենցի աշակերտներից մեկը՝ Զաքարիա գրիլը, 1505 թվականին շարունակելով իր սաւուցի կիսատ թողած գործը, հետևյալ ուշագրավ տեղեկություններն է տվել նրա կյանքի մասին. «... Եւ արդ գրեալ եղաւ Յոհան գուփն ձեռամբ վարդապետին իմոյ Տէր Յոհաննիս Մանգասարենց քաջ բարտողին, որ ՀԲ (72) տարի՝ ամառն և ձեռն, զիշերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղաւ ձեռամբ նորա և (40) Այսմաւուք և Տարենգիրը, իսկ փոքր զիրը՝ Տեար և Աղօթամատոյց, Տարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետը (50)—կ (60) և այլ աւելի, և Անետարան և (32): Եւ զայս Յոհան գուփն ի ծերութեան ժամանակիս, որ աշք չէր հայիլ և ձեռքն կու գողայր, բազում շարլարանօք հագիւ կարաց աւարտել, և այլ չկարաց գրել բռնել մինչ ի վախճան, որ համեմատ ի Թրիստոս ԶԶ (86) ամաց... Եւ արդ, ևս Զաքարիայ աշակերտ նորին զրեցի զՂուկաս գլուխն, և Կարապետ աշակերտ մեր գրեաց զՄաթէոս և զՄարկոս գլուխն...» (Ն. Լալայան, «Ժուցակ հայերեն ձեռագրաց վաստորականի», 1915, թիֆլիս, պրակ առաջին, էջ 619—620, —լ. Ս. Խաչիլյան, «Ժուցակ հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, Սրբվան, 1955, էջ LIV, 587. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 5256, էջ 291բ—292ա),



Աղթամարի Ս. Խնձ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Խլաթեցին, թովմա Մինստենցը և բաղմաթիվ այլ գրիչներ և ծաղկողներ<sup>48</sup>: Մեծ թվով գրչության կենտրոններ և բեղմնավոր գրիչներ ունեցող Վասպուրականը, պարզ է, որ պետք է ունենար նաև հաղարավոր ձեռագրերով հարուստ մատենադարաններ: Այս մասին բավական է միայն նշել, որ մի ձեռագրի հիշատակարանից ունենք տեղեկություն, թե 1693 թվականին միայն կիմում 3124 ձեռագրի է պահվել, և որոնք շարակարգված էին առարկայականորեն և գետեղված հատկապես որատրաստված 22 պահարանների մեջ<sup>49</sup>: Իսկ ինչքան ձեռագրեր գետ պետք է լինեն Աղթամարում, Կոտուցում, Վարագում և Վասպուրականի մյուս մատենադարաններում:

Այդ վանքերից շատերը, գարերին դիմագրավելով, կարողացել էին հասնել մինչև արյունալի 1915 թվականը: Եվ ինչքան անգին ձեռագրի գանձեր էին նրանք պահում իրենց սրահ խորքում, որպեսզի մի օր կարողանան լուսավորել մեր ժողովրդի մոտալուս արշալուս...:

Վասպուրականցին 1895—1896 թվականների Համբոյան ջարդերի ժամանակ, ինչպես նշեցինք, բավականին ծանր կորուստներ էր տվել, սակայն այնուամենայնիվ իր ձեռագրերի մեծ մասը կարողացել էր Վանի կոտորածի ժամանակ թաքցնել եկեղեցիների գաղտնի պահարաններում, ուր 14 տարի շարունակ անձեռնմխելի մնալով՝ բորբոսնել, փշացել և թերթերը իրար էին կպել: Առաջդ ժամանակ է, որ անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը գնալով Վան, Հանել է տվել ձեռագրերը թաքստոցներից և արել տակ չորացրել, մաքրել և այսպիսով ազատել կորստից, և դիմելով նաև ուրիշների օգնության, սկսել էր նրանց ցուցակագրման աշխատանքներին:

Երվանդ Լալայանը Վասպուրականի ձեռագրերի իր կազմած ցուցակի առաջին պրակում գրում էր. «Ամբողջ աշխատությունը ներփակելու է առնվազն 2 000 ձեռագրիների նկարագրությունը, սրանց հիշատակարանների և ծանոթությունների լիակատար ընդօրինակությունով»<sup>50</sup>: Եթե նկատի ունենանք, որ Լալայանի նկարագրելիք ձեռագրերը հիմնականում գտնվում էին Վանում, Աղթամար, Լիմ և Կոտուց կզզիներում, ապա պետք է կարծել, որ բովանդակ Վասպուրականում դեռևս

այդ ժամանակ կանգուն եղող և գործող բազմաթիվ վանքերում և եկեղեցիներում առնվազն պետք է լինեն հիշյալ 2 000-ից կրկնակի շափով ավելի ձեռագրեր:

Երբանացի հայագետներից մեկը, այցելելով Աղթամարի վանքը, գրում էր, որ վանականները իրեն ցուց են տվել մատենադարանի արժեքավոր ձեռագրերը: Նույն հայագետի կարծիքով, այսուեղ ամբողջ Արևմբոյան Հայաստանի ամենակարևոր գրչագրերն են պահվում: Հայագետը, նպատակ ունենալով ուսումնասիրել Ավետարանի հայկական հնագույն օրինակները, հույս էր հայտնում հետազում երկար ժամանակով կրկին գալ այսուեղ աշխատելու համար<sup>51</sup>:

Սակայն արյունալի 1915 թվականին Վասպուրականից ևս բաղմաթիվ գրչագրեր ոչնչացան անհետ կերպով:

Մեր վանքերի պատմության հմուտ մասնագետ Հ. Հ. Ոսկյանը գրում է. «Թեև 1895—1896 թեպերու շրջաններուն կարելի կը լաւ անոնցմե (իմա' ձեռագրերի—Ս. Ք.) կարենոր մաս մը թաքստոցներու մեջ պահել, սակայն մեծ եղեռնի ատեն անոնցմե միայն փոքրիկ մաս մը հնարավոր կը լաւ գրելու ու զերծուցանել. մնացածը թալանի ու կրակի կենթարկվի»<sup>52</sup>:

Եղեռնի ժամանակ մեծ վնաս կրեցին հատկապես կիմ անապատի և Վարագի վանքի մատենադարանները:

Կիմ անապատում, ուր դեռ 1693 թվականին, ինչպես նշեցինք, 3124 ձեռագրեր էին պահվում, ըստ մի տեղեկության, 1898 թվականին արդեն այնտեղ մնացել էին մոտ 3 000 տպագրված և միայն 300 էլ ձեռագրի գրերի<sup>53</sup>: Չեռագրերի թվի մասին ավելի հավաստի են կիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի տվյալները, ըստ որի «կիմ անապատի ձեռագրերու թիվը կհասներ 550 կտորի»<sup>54</sup>: Սակայն մեծ եղեռնի ընթացքում, ինչպես հաղորդում էր նույն Հովհաննես վարդապետ Հյուսյանը, կիմը մեծ վնաս էր կրել. «Եկեղեցվոր և ամբողջ սենեկաց դռները խորտակված, ձեռագրիներու ընթիր մասը վեցցված է (ընդգծումը մերն է—Ս. Ք.), կմնան ձառնութիր-Հայսմավուրքները և մաս մը անարժեք ձեռագրերը»<sup>55</sup>,

<sup>51</sup> Paul Rohrbach, „Vom Kaukasus zum Mittelmeer Eine Reisezeit und Städtereise durch Armenien...“, Leipzig und Berlin, 1903, p. 72.

<sup>52</sup> Հ. Հ. Ոսկյան, «Վան-Վասպուրականի վանքերը»,

Գ, Վեհնեա, 1947, էջ 1086:

<sup>53</sup> «Արարատ», 1898, էջ 400:


<sup>54</sup> Մշտացի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացակաների ֆոնդ, № 92, էջ 4ա:

<sup>55</sup> «Արարատ», 1915, էջ 863:

<sup>48</sup> Լ. Ս. Խաչիկյան, նշված աշխատությունը, էջ LIV:

<sup>49</sup> Գարեգին Ա. Կարողիկոս, «Մատենադարանները հին հայոց մեջ», «Պայտքար»-ի բացառիկ, 1946:

<sup>50</sup> Երվանդ Լալայան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», պրակ առաջին, Թիֆլիս, 1915, էջ 5:



Աղբամարի Ս. Խաչ Մայր Եկեղեցին և Վանա ծովը

Նույնքան ծանր հարված կրեց նաև Վարագի վանքը; Վենեսուելացի զորավար Ռաֆայել դե Նոգալեսը, որ Վանի 1915 թվականի ապրիլան հերոսամարտին դարձել էր նահանգապետ Ջեղեթ փաշայի աջ բազուկը (իրրեն հրամանատար թուրքական հրետանիի և պահակազորի և ընդհանուր պետ Վանի քաղաքամեջը պաշարող թուրքական ուժերի), իր հուշերում գրում էր, որ երբ Հայերը լքեցին Վարագը, թուրքերի ձեռքը թողին հազարամյա վանքը իր գրադարանով, որը թուրքերը այրեցին<sup>56</sup>; Սակայն ձեռագրերի մի

մասը պատահաբար փրկվեց; Վասպուրականի ձեռագրերի փրկության գործում մեծ դեր խաղացած Հովհաննես վարդապետ Հյուայնը Գևորգ ծ կաթողիկոսին հայտնում էր.

«Վարագա վանքը գացինք, ճիշտ կմ անապատի վիճակն ուներ, եկեղեցվո պատեր,

իսպաներեն գրած օրագրության մեջ շուրջ 50 էջ նվիրել է Վասպուրականի և Վանի հերոսամարտերին; Նա ի միջի ալլոց գրել է նաև հետևյալը. «Հայերը կովում էին մինչև իրենց վերջին շունչը. Կատաղորեն իրենց հրդեհված տների փլատակների միջից. Ազատ Հայաստանի ու Ս. Խաչի հաղթանակին համար, մինչդեռ ևս անիծում էի այն ժամը, որ շար բախտը ունեցած էի իմ կրոնակիցների դաշինքը դառնալու»;

<sup>56</sup> Rafael de Nogales, „Cuatro años Bajo la media luna”, 1924, Buenos-Aires. Հեղինակն իր

Հատակներ քանդված ու կողոպտված էր, բարեխախարաբար գրադարանի վերածված սկզբցվույն մեջ, պահարան մը նկատի լինելով միանգամայն՝ քանդիչներու աշքերեն վրիպած էր, որ պահված կային ձեռագիր և տպագիր մատյաններ և կարգ մը եկեղեցականի իրերը<sup>57</sup>:

Սակայն, հակառակ այս բոլորին, մեր ձեռագրական կենտրոններից ամենից բախտափորն է լինում Վասպուրականը, քանի որ, շնորհիվ հայերի ինքնապաշտպանության և ուսական ու հայ կամավորական զորքերի օգնության, հայ ազգարնակշության հետ փրկվեցին նաև կարևոր թվով ձեռագրեր:

Վասպուրականի ձեռագիր հուշարձանների փրկության նախաձեռնությունը պատկանում է Ամենայն Հայոց Գնորդ Յ կաթողիկոսին, իսկ գործուն մասնակցության մեջ արժանի են հիշատակության կիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը և հայագետ Մմբատ Տեր-Ավետիսյանը:

Դեռևս 1915 թվականի հունիսին, Վասպուրականի մեծ գաղթի ժամանակ, մի շարք եկեղեցական ու թանգարանային արժեքների հետ միասին էջմիածին են տեղափոխվուած 284 ձեռագրեր, այդ թվում Աղթամարից 201, Վանից և նրա շրջակայթից 61, կիմից 22, իսկ մնացածը խնամքով թաքցնում առանձին թաքստոցներում<sup>58</sup>: Հովհաննես վարդապետ Հյուսյանը գրում է, որ այդ ժամանակ նա Գնորդ Յ Ամենայն Հայոց Կաթողիկոսին է հանձնում կիմ անապատի ազգային-եկեղեցական բոլոր սրբությունները, այդ թվում նաև 17 կտոր գրագիր սրբազն մատյաններ, իրեն գրչի և գեղարվեստի գոհարներ և հրաշալիքներ, որոնցմբ 7—8 կտորներ մաղղաթյա էին<sup>59</sup>:

1915 թվականի հոկտեմբերին, երբ ոռուական զորքը կորին մտել էր Վան, Ամենայն Հայոց Գնորդ Յ Կաթողիկոսը բոլոր միջոցները ի գործ է զնում զեռևս Վասպուրականում մնացած մեր մշակութային նշխարները փրկելու համար: 1915 թվականի հոկտեմբեր 3-ի և 1689 կարգադրությամբ, Վեհափառը հրամայում է կիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանին, իր հետ ունենալով Կտոր անապատի միաբան Ստեփան վարդապետին, Ավերադառնալ Հայրենիք և ժողովելով անապատների բոլոր ձեռագրերը և թանկարժեք հնությունները, կանոնավրապես ցուցակագրել և պահով ճանա-

պահով բերել Ս. էջմիածին, այնտեղ անկորուստ պահպանելու համար<sup>60</sup>:

Վանի շրջանի մեր մշակութային գանձերի փրկության գործին ցանկանում է օպտակար լինել նաև Պետերբուրգի գիտությունների ակադեմիան: Մմբատ Տեր-Ավետիսյանը, որը Կովկասյան (Թիֆլիսի) թանգարանի պագագիկի էր, «գիտության ճեմարանի որդման համաձայն և Տ. Փոխարքայի Հրամանով», գնալու էր Վանի շրջանը պատմական-մշակության հիշատակարանների վիճակը ստուգելու և նրանց պահպանման համար միջոցներ ձեռք առնելու համար: Ընդառաջելով Ս. Տեր-Ավետիսյանի նոյեմբեր 2-ի համական, Կաթողիկոսը հնագիտական հիշյալ որոնումների ժամանակի իրեն ներկայացուցիչ է նշանակում կիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետին և հանձնարարում, որ «որոնած և գտած հնագիտական բոլոր իրեղնեները, մեծ ու փոքր ձեռագրերը, եկեղեցական հնագիտական արժեք ունեցող սպասներն ու զարդերը մանրամասն ցուցակագրվեն և ցուցակագրվելուց հետո կնքվեն հոգեստ իշխանության ներկայացուցչի և ձեր (իմա' Ս. Տեր-Ավետիսյան) կնիքներով և պահակների ապահով հսկողության տակ փոխարժեած կիմին ուղղակի Ս. էջմիածին...»<sup>61</sup>:

Սակայն զեռևս Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչը Վանի շրջանը շժամանած, Հովհաննես վարդապետ Հյուսյանը 1915 թվականի նոյեմբերի 10-ին վեհափառ Կաթողիկոսին ուղղված իր գրությամբ տիսուր տեղեկություններ էր հաղորդում Վասպուրականի հնությունների վերաբերյալ: Սրանից առաջ մենք նշեցինք արդեն կիմ անապատի և Վարագի վանքի կողոպավելու և քանդվելու հետ կապված տիսուր մանրամասնությունները: Վեհափառ Կաթողիկոսը տեղեկանալով այդ մասին, իր կարգադրությամբ Հայրապետական դիվանը երկու օր հետո, նոյեմբերի 21-ին, շտագ գրություն է ուղղում կիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետին, պատվիրելով նախ «մնացածը ձեռագիրների ամբողջական ցուցակը ուղարկել նորին Վեհափառության՝ ապա հափշտակությունից ազատված անխատիր բոլոր ձեռագիրներն և մյուս եկեղեցական հնություններն ապահով կերպով փոխադրել Ս. էջմիածին հանուն դիվանիս»<sup>62</sup>:

Մմբատ Տեր-Ավետիսյանը և Հովհաննես վարդապետ Հյուսյանը, տեղական ուժերի օգնությամբ, Վանի շրջակա վանքերից և

57 «Արարատ», 1915, էջ 864:

58 «Արարատ», 1916, էջ 47:

59 Մաշտոցի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացակների ֆոնդ, № 92, էջ 4ա:

60 «Արարատ», 1915, էջ 811:

61 «Արարատ», 1915, էջ 860—862:

62 «Արարատ», 1915, էջ 865:

եկողեցիներից փրկեցին և էջմիածնի մատենադարանին հանձնեցին 1082 մեծ ու փոքր ձեռագրեր, որոնք և նախապես բերված 284 ձեռագրերի հետ կազմում են 1366 ձեռագրեր<sup>63</sup>, այդ թվում Աղթամարից 285, Վանից 234, Լիմից 303, Կտուցից 187, Վարագից 357:

Հստ Հովհաննես վարդապետ Հյուսյանի ականատեսի տվյալների, որը նա գրել է իր «Համառոտ» նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու...» անտիպ գործում, Վասպուրականից հավաքված ձեռագրերի թիվը համարվում է 1410, այդ թվում կիմ անապատից 400, Վարագի վանքից 360, Կտուց անապատից 300 ձեռագրի, իսկ 350 էլ ոչ անա և Այգեստանյաց, Ս. Նշան, Ս. Միքանավոր, Ս. Սահմակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հայնկույսներու, և Նորաշենաց (սույն 10) եկեղեցիներեն, հողերու և մոխիներու տակեն, կամավորներեն, այս ու այն անհատներեն<sup>64</sup>: Այս բոլորը արկղերի մեջ զետեղելով, Հյուսյանը անձամբ 1916 թվականի հունվարի 7-ին Զովքայի վրայով բերեց էջմիածին և հանձնեց մատենադարանին, Հուսիկ եպիսկոպոսի մատենադարանապետության օրերին<sup>65</sup>: Այստեղ նա չի նշում Աղթամարից բերած ձեռագրերի մասին, իսկ բերված ձեռագրերի թիվն էլ նախորդ մեր բերած ցուցակի համեմատությամբ 54 ձեռագրով ավելի է: Այս կարող էր թյուրիմացության արդյունք լինել: Սակայն ավելի զարմանալի են նույն Հյուսյան վարդապետի անտիպ աշխատության շարունակության մեջ նշված այն փաստերը, որոնք վերաբերում են Վասպուրականից նորանոր ձեռագրեր բերելու հարցին: 1916 թվականի մայիսին, երբ Հյուսյան վարդապետը Կաթողիկոսի կարգադրությամբ կրկին Վան էր վերադարձել, ահա այդ ժամանակ էլ նա հավատում է, որ 400 ձեռագրի և հավաքել և հանձնել է կապիտան Զանգալյանին, որը գարով էջմիածին, բոլորն էլ հանձնել է Վեհափառ Կաթողիկոսին: Դարձյալ, Հյուսյանը գրում է, որ 260 կտոր այլ ձեռագրեր էլ ուղարկել է Գարադոշյան Սահմակի միջոցով: Այսպիսով, Հյուսյան վարդապետը Վասպուրականից էջմիածին տեղափոխած ձեռագրերի ընդհանուր թիվը համարում է 2070 հատ<sup>66</sup>:

<sup>63</sup> «Արարատ», 1916, էջ 46—47: Այստեղ սխալմամբ ձեռագրերի ընդհանուր թիվը նշված է 1326, այնին իրականում պետք է լինի 1366:

<sup>64</sup> Անտիպ ձեռագրացացակների ֆոնդ, № 92, էջ 5ա:

<sup>65</sup> Նույն տեղում:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 5ա—բ:

Սակայն իրականում, ինչպես նշում է Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտական աշխատող 0. Եգանյանը, հիշյալ 660 ձեռագրերի մատենադարան մուտք գործելու մասին որեցից տեղեկություն չի պահպանվել: Գիտենք միայն 87 ձեռագրերի մասին, որոնցից 20-ը այլ լեզուներով, որ Հյուսյանը 1916 թվականին Վանի շրջակայքից հավաքելով ուղարկել է Զուկավայի վրայով, սակայն մաքսատան վարչությունը դժվարություններ էր ստեղծել: Ի վերջո, Վեհափառի գիմումով հնարավոր եղավ նրանք առանց մաքս վճարելու հասցնել էջմիածին: Նույնիսկ եթե հիշյալ 87 ձեռագրերը համարենք նշված 660 ձեռագրերի մի մասը, դարձյալ պակաս է մնում 573 ձեռագրերի մի պատկանելի թիվ, որի ճակատագրի մասին գժրախտաբար ոչինչ շգիտենք: Այդ փրկված 87 ձեռագրերը ականատես էին եղել հայ ժողովրդի զաժան ճակատագրին: Նրանց մասին ասված է, որ «գժրախտաբար ձեռագրիների մեծ մասը խիստ վնասված է, սկզբից և վերջից պակասվոր, կազմերը պոկված և ավերի ժամանակ օտար ձեռքբերց փշացած»:

Վասպուրականում մեր ձեռագրական կորուստների բացահայտման հարցում մասամբ կարող է նպաստել ազգագրագետ Ե. Լալայանի հրատարակած և անտիպ մնացած ձեռագրերի համեմատումը Մաշտոցի անվան մատենադարանում Վասպուրականից մուտք գործած վերոհիշյալ ձեռագրերի հետ: Լալայանի Վասպուրականի ձեռագրերի ցուցակի հրատարակված միակ առաջին պրակում նկարագրված է 480 ձեռագիր, սակայն նրանից այժմ Մաշտոցի անվան մատենադարանում պահպան է միայն 281 ձեռագիր: Եթե նկատի ունենանք, որ հիշյալ ձեռագրերից երկուը (Ե. Լալայան, № 4, 82, կամ կիմ № 32, 76), գտնվում են բանասեր Հարություն Քյուրյանի ձեռագրական հավաքածուում (Կիշտա, Կանգաս, ԱՄՆ), իսկ մեկն էլ (Ե. Լալայան, № 33, կամ Կտուց, № 230) ՍՍԽՄ գիտությունների ակադեմիայի Ասիա-և Աֆրիկայի ինստիտուտի կենտրոնագիր բաժնամունքում (№ 87), Լալայանի միայն հրատարակված ցուցակից մինչև այժմ անհետ կորած ձեռագրերի թիվը կլինի 196<sup>70</sup>:

Անհետ կորած վերոհիշյալ ձեռագրերի թվում կան նաև հայ հնագրության և հայ

<sup>67</sup> Օճենիկ նգանեյան, «Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրական հավաքածուները», տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», Ա, էջ 98 (մամուլի տակ):

<sup>68</sup> «Արարատ», 1916, էջ 337, 344:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 344:

<sup>70</sup> Օճենիկ նգանեյան, նշված աշխատությունը, էջ 102,

գրչության պատմության համար մի շարք մեծարժեք ձեռագրեր: Առաջին հերթին իր պատկառությունը հնությամբ նշանափոք է Վանի Քողաքանի երկաթագիր մազաղաթյա Ավետարանը, գրված 1055 թվականին, որը մինչև 1915 թվականը պահպում էր հիշյալ գյուղի և կեղցում և մեծ սրբություն էր համարվում և փաթաթված էր բազմաթիվ թաշկինակների մեջ. սակայն դժբախտաբար Ե. Լալայանը շիկարության վերաբերյալ նշանակում է 1888 թվականին<sup>71</sup> և մինչև մեծ եղենը Գավառի Կարփել գյուղի և կեղցում պահպատճեառով<sup>72</sup>: Կորած ձեռագրերից է Վանի Հայնկուլսներ և կեղցու Ավետարանը, գրված Կարինում 1188 թվականին<sup>73</sup> և մինչև մեծ եղենը Գավառի Կարփել գյուղի և կեղցում պահպատճեառով<sup>74</sup>: Կորած ձեռագրերից է Վանի Հայնկուլսներ և կեղցու Ավետարանը, գրված Ավետարանը<sup>75</sup>: Ընդհանրապես ժամանակ գրված մեղ հասած սակավաթիվ գրչագրերի համար ծանր կորուստ են նաև հետակալները. Ամենու նոր գեղում պահպատճեառում գրված Ավետարանը<sup>76</sup>, Ս. Հակոբ վանքի սեփականությունը և 1292 թվականին Սահմանականությունը<sup>77</sup>, Ս. Հակոբ վանքի սեփականությունը և 1293 թվականին Անարգայի (Անարգաբայի) դպյակում գրրված արծաթապատ Ավետարանը<sup>78</sup>, և վերջապես Ջյուլամերիկի Փոկան գյուղի և կեղցում պատկանող և 1298 թվականին Կյուպուց վանքում գրված Ավետարանը<sup>79</sup> և շատ այլ ձեռագրեր:

Վասպուրականի ձեռագրական կորուստների քանակի մասին կարենոր լույս է սփռում նաև Լալայանի ձեռագրաց ցուցակի անտիպ մասը: Ինչպես տեսանք, ըստ հիշյալ ցուցակի ապագակիր միակ պրակի, մեր անհետ կորած ձեռագրերի թիվը կազմում է 196 գրչագիր, սակայն եթե նկատի ունենանք նաև այն իրողությունը, որ անզանի ազգագրագետը Վասպուրականում իր նկարագրած ձեռագրերի թիվը հասցել էր 1565-ի<sup>80</sup>, իսկ այս վեր-

շինս էլ եթե համեմատելու լինենք Մաշտոցի անվան մատենագրաբանում Վասպուրականից մուտք գործած ձեռագրերի հետ, ապա մեզ հայտնի կրանք այն ցավալի իրողությունը, որ նշված 1565 ձեռագրերից մեզ չի հանել շահագիր պատկառելի մի թիվ<sup>81</sup>:

Վանեցի ուսուցիչ Հովհաննես Բարաղամյանի կողմից կազմված «Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» անտիպ գործում<sup>82</sup>, ուր նկարագրված է 469 ձեռագիր, պարզում է, որ Մատենագրաբան մուտք է գործել 227, իսկ պահատում է 242 ձեռագիր: Մակայն Բարաղամյանի ձեռագրաց ցուցակը, ըստ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, իր վանքակել է 611 ձեռագրերի նկարագրություն, պարզ է, որ այդ ձեռագրացուցակում Մատենագրաբան մուտք չգործած ձեռագրերի թիվը շատ պակալի մեծ պիտի լիներ, քան նշված 242 պահատող ձեռագրերը: Բարաղամյանի հիշյալ պակելի ընդարձակ ձեռագրացուցակը մինչև 1915 թվականը տեսել և իր ձեռքումն է ունեցել Գարեգին վարդապետ Հովհաննեսից, սակայն հետագայում այն անհետ կորել է<sup>83</sup>:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Վասպուրականից էջմիածին բերված ձեռագրերը, երբ համեմատվում են Լալայանի և Բարաղամյանի ձեռագրացուցակների հետ, ոչ միայն երեան են գալիք հիշյալ ցուցակներում պահատող մեծ թվով գրչագրերի համարներ, այլև կան նաև այնպիսիները, որոնք չկան հիշյալական ցուցակներում: Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, հիմնվելով Հովհաննես վարդապետ Հյուսյանի և Դանիել վար-

<sup>71</sup> Լալայանի ձեռագրահամարները թեև հասնում են 1525-ի, սակայն այդ ցուցակում 40 ձեռագրահամարներ կրկնված են, ուստի նկարագրված ձեռագրերի ճգրիտը թիվը կազմում է 1565 ձեռագիր:

<sup>72</sup> Օնենի Նզանյան, «Համեմատական տախտակ Լալայան անտիպ ցուցակի և Մաշտոցի անվան մատենագրաբանում մուտք գործած Վասպուրականի ձեռագրերի համարների (անտիպ):

<sup>73</sup> Մաշտոցի անվան մատենագրաբան, ձեռ. № 6333:

<sup>74</sup> Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ղիվան:

<sup>75</sup> Առաջին հայացքից կարելի է կարծել, որ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) կողմից հիշյալական թարաղամյանի ձեռագրացուցակը կարող է նույնը լինել Մատենագրաբանի № 6333 ձեռագրերը հանդիսացող և նույն հեղինակի 469 ձեռագրերի նկարագրություն ունեցող ցուցակի հետ, իսկ վերջինիս թերի լինելը կարելի է պատճառաբանել վերջից որոշ պրակներ ընկած լինելու հնարավորությամբ: Սակայն մանրամասնորեն համեմատում ենք նրանց բո-

<sup>71</sup> Երվանդ Լալայան, նշված աշխատությունը, № 44, և Գարեգին Անարողիկոս, «Հիշյալակարանը ձեռագրաց», էջ 233—234:

<sup>72</sup> Երվանդ Լալայան, նշված աշխատությունը, № 45:

<sup>73</sup> Նույն տեղում, № 46:

<sup>74</sup> Նույն տեղում, № 56:

<sup>75</sup> Նույն տեղում, № 30:

<sup>76</sup> Նույն տեղում, № 60:

<sup>77</sup> Նույն տեղում, № 62:

<sup>78</sup> Նույն տեղում, № 66:

դապետ Զատոյանի<sup>83</sup> ասածների վրա, գրում է, որ էջմիածին փոխադրվելիք Վասպուրականի ձեռագրերից բավական թվով գրչագրեր կորել են և թափվել Վանա լճի մեջ, ուստի անհատների մոտ և կամ եկեղեցիներում եղած ձեռագրերը, որ Լալայանը և մանավանդ նրա հանձնարարությամբ ցուցակագրողները չեն տեսել, զաղթի ժամանակ կարելի եղավ հավաքել այլ վանքերի ժողովածուների մեջ և այդ անվամբ ուղարկել էջմիածին: Ահա թե ինչո՞ւ հիշյալ վանքերի անունով կան ձեռագրերը, որոնք չկան Լալայանի և Թարաղամյանի ցուցակներում<sup>84</sup>:

1916—1917 թվականներին Թիֆլիսում, Մ. վարդապետ Մաքսուլյանի, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, Ստեփան Կանայանի ջանքերով, Վասպուրականի գաղթականներից ձեռք է բերվել 15 ձեռագիր, իսկ 1924—1960 թվականներին դարձյալ վասպուրականցիներից Մատենադարանում ստացվել է 18 ձեռագիր: Այսպիսով, ըստ Օննիկ Եգանյանի վերջնական ճշգրիտ հաշվումների, մինչև 1960 թվականը Վասպուրականից փրկվել և մուտք է գործել Մաշտոցի անվան մատենադարանում 1473 ձեռագիր, որից հայերեն ձեռագրեր 1435, հայերեն ձեռագրերի պատառիկներ 7, հայերեն հմայիլներ 8, իսկ 23 ձեռագիր էլ արարատուու ծցտված տվյալներով ձեռագրերը բերված են ա) Աղթամարից 285 (որից 2-ը արարատառ), բ) Լիմից 306 (որից 1-ը արարատառ), գ) Վարագից 345, դ) Կոտուցից 202, ե) Վանից և շրջակայթից 335 (որից 20-ը արարատառ), այդ թվում Մ. Վարդանից 82, Մ.

վանքակությունը, այլ պատկեր է պարզվում: Եթե առաջին ցուցակը, ըստ Տեր-Մովսիսյանի, սկսում է Աղթամարով, և նկարագրված են 1—203 ձեռագրերը, ապա երկրորդն սկսվում է Կոտուց անապատով և նկարագրում է 1—110 ձեռագրերը, իսկ Աղթամարից և ոչ մեկը՝ Դարձյալ, եթե առաջինը ապարտվում է Վարագով և նկարագրվում են 593—611 համարները, ալսինքն միայն 19 ձեռագիր, ապա երկրորդ ցուցակը դարձյալ վերջանում է Վարագով, սակայն նկարագրված ենք գտնում 194 ձեռագիր (№ 281—475): Այսպիսով կարելի է հետևողներ, որ Բարաղամյանը կազմել է երկու տարրեր ձեռագրացուցաներ, ուստի ոչ միայն հաճախ իրար կրկնել են, այլև հասած լինելու դեպքում կարող են և իրար լրացնել նման Փիրղակամլանի կազմած ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների:

<sup>83</sup> Հսա մի տեղեկության, Զատոյանն է եղել այն անձը, որ սնդուկներից մեկի պարունակած ձեռագրերը ծովն է թափել և իր աղասու շորերը տեղավորել («Արծիվ Վասպուրականի», Բոստոն, 1944, № 9):

<sup>84</sup> Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիվանի

Պողոս-Պետրոսից 86, Ս. Սահակից 38, Ս. Նշանից 33, Ս. Սիրանավորից 10, Արարեփից 12, Նորաշենի եկեղեցուց 2, Հայկավանից 1, Սիթողից 1, Շուշանցից 1, Վանի առաջնորդարանից 1, Լեզբից 1, ոմն Վարդանից 1, Բագրևանդի Ս. Հովհաննես եկեղեցուց 1, Վանեցի գաղթականներից 15, պատկանելությունն անորոշ 49 (որից 20-ը արարատուու):

Չնայած այն բանի, որ մեծ եղեռնի ժամանակ ամենից ավելի մեծ թվով ձեռագրեր փրկվեցին Վասպուրականից, սակայն նույն ժամանակ մեր տրամադրության տակ եղած տվյալներից դատելով, ամենայն հավանականությամբ կարելի է ասել, որ ձեռագրական մեծագույն վնասներից մեկն էլ կրեցինք: Հենց նույն Վասպուրականում, Լալայանը, որ նպատակ էր ունեցել Վասպուրականում կազմել «առնվազն 2000» ձեռագրերի նկարագրություն, հասցրել է մեզ միայն 1565 ձեռագրերի ցուցակը, որից, ինպես ասվեց, Մատենադարան մուտք չի գործել 628 ձեռագիր, իսկ երբ սրան գումարենք նաև լալայանի նկարագրել խոստացած շուրջ 500 ձեռագրերը, ինչպես նաև բազմաթիվ վանքերում, եկեղեցիներում, գյուղերում և անհատ մարդկանց մոտ գտնվող ձեռագրերը, իսկապես որ շատ ահավոր լինի մեր ձեռագրական կորուստների թիվը Վասպուրականում:

Վասպուրականի մեր ձեռագրական կորուստների մասին միանգամայն արժեքավոր և հավաստի տեղեկություններ կան Հովհաննես վարդապետ Հյուայանի հիշատակված անտիպ գործում: Հյուայան վարդապետը հայանում է, որ կիմ անապատում ձեռագրերի թիվը հասնում էր 550-ի, ուներ նաև 3000-ի շափ տպագրված մատյաններ, Կոտուց անապատը ևս ուներ մոտ 500 կտոր ձեռագիր, որից, ասում է հեղինակը, «320 կտոր միայն հաջողեցավ ինձ բերելու էջմիածին, իսկ մնացածը ամենաընտիր մասը եկեղեցական բոլոր հնությանց և սրբությանց հետ մնացին և բաժին եղան թուրքերուն, շնորհիվ նույն անապատի միաբան, անհեռատես և կամակոր Ստեփան արելային, որուն դարձյալ նման Վարագագործակալ Պետրոսին, շատ խնդրեցի ցուցնել իրենց պահարանը և հանձնել էջմիածին փոխադրելու, սակայն լսեց և համաձայնեցավ»<sup>85</sup>:

<sup>85</sup> Օննիկ Եղանյան, Խված աշխատությունը, էջ 99—100:

<sup>86</sup> Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 92, էջ 4ա, 9բ—10ա:

Վարագի վանքի մասին նույն Հյուայան վարդապետն ասում է, որ ուներ 500 կտորից ավելի ձեռագրեր, որոնք բարեախտաբար նախապետ սրբազն անոթների հետ պահպած էին եկեղեցու երկու տարրեր թաքստոցներում։ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, երբ Հյուայանը կրկին 1915 թվականի հոկտեմբերին գնացել է Վան, նա երկու օր պրատելուց հետո հաղիվ կարողացել է գտնել թաքստոցներից մեկը, ուր զետեղված էին եկեղեցական հասարակ զգեստեղնեները և անոթները և 360 կտոր ձեռագրեր։ Հյուայանը երկրորդ թաքստոցի մասին գրում է. «Իսկ այս գաղտնաբանը, որու մեջ պահպած էին թանկարժեք սուրբ անոթները, եպիսկոպոսական ականակուու և ասեղնագործ թագերը, շուրջառները, ծածկոցները, խաչերը, սկիճները, գավազանները և այլն, որոնց հետ նաև 150 կտոր ոմանք մագաղաթ և ընտիր ձեռագիր մատյաններն, հակառակ թափված բոլոր շանքերու, շկարողացա գտնել»։ Վանքի գործակալ Պետրոսը թաքստոցի տեղը հայտնելուց հրաժարվեց<sup>87</sup>։

Հյուայան վարդապետը թուրքերի ձեռքը գերի ընկած և ապա ազատված հայերից լսել էր, որ թուրքերը, մտնելով կղզիները, խուզարկելով գտել են ինչպես Կտուց անապատինը ամբողջապես և թե՛ Վարագի այն պահարանը, որի տեղը չէր հայտնել հիշյալ Պետրոսը և ողջ հարստությունը և ձեռագրերը հավաքում են Վանում։ Թուրքերի այն հարցին, թե ի՞նչ գրեթե են դրանք, հայ գերիները, որ կիսագրագիտ մարդիկ էին, պատասխանում են, թե հին ժամանակներից մնացած գրերը են, և ձեռքով գրած լինելով, իրենք հնարավորություն չունեն կարգալու Թուրքերը հիշյալ հարստությունն ու ձեռագրերը տեղափոխում են, սակայն թե ո՞ւր, հայտնի չէ. «Արդյոք Անլյուրի», թե ուրիշ քաղաք մը», — ասում է Հյուայանը<sup>88</sup>։

Առանձնապետ ուշագրավ են Հյուայան վարդապետի այն տեղեկությունները, որոնք վերաբերում են մինչև մեծ եղենը Վասպուրականում գետ կանգուն մնացած և ձեռագրերով հարուստ մի քանի հուշարձանների ճակատագրին։ Զնայած շատ սեղմ են Հյուայան վարդապետի հիշյալ տողերը, սակայն դրանք ունեն ճանաշողական բացառիկ արժեք Վասպուրականի գեթ մի քանի վանքերում պահպած մեր ձեռագրերի տիսուր վախճանի վերաբերյալ։ Ահա նրա այդ թանկապին տեղեկությունները համառոտ կերպով։

<sup>87</sup> Անմիապ ձեռագրացուցակների ֆոնդ, № 92, էջ 12ր։

<sup>88</sup> Նույն տեղում, № 92, էջ 10ա։

Ալուրի Ս. Աստվածածին վանք—Ս. Գրիգոր Նարեկացի. — «Վանքին գրչագրերը նախապետ Կտուց անապատ էին տարված, կմնային միայն 8—10 կտոր Ավետարաններ և երկու արծաթապատ նարեկներ, որոնցմեծ մինը որ մագաղաթ էր 10-րդ դարու գրված էր, իր իսկ Ս. Գրիգոր Նարեկացու մատներվածք։ Նա հոչակված էր և հրաշագործ էր համարվում։ «Սույն անգին զանձն ալ... վանքին մեջ մնացածներու հետ կորսույան մատնվեցավ»<sup>89</sup>։

Ս. էջմիածինի վանք (Բաշենից անապատ). — «Կարևոր ձեռագրերը կմասնապատ տարված էին. կմնային միայն մի բանի կառու գրչագիր Ավետարաններ»<sup>90</sup>։

Գրիգորի վանք, նաև Սահապատի վանք. — «Երա մեջ եղած հայութավոր գրչագրերը, եկեղեցական սուրբ անոթեղինաց և հնությանց հետ թալանի մատնվեցան և շինություններն հրկիվվեցան»<sup>91</sup>։

Կարմրավորի վանք, նաև Շուշանից վանք. — «Նա էլ Ս. Գրիգորի վանքի նման թալանվեցավ, հրկիվվեցավ և յուր ունեցած գրչագրերը և եկեղեցական սրբություններն թալանվեցան»<sup>92</sup>։

Ս. Խաչի վանք—Ղուսուրաշա վանք. — «1915 թվականի Վանա ինքնապաշտպանության կովկներու ընթացքին Ս. Խաչի վանքն ալ թալանվեցավ, այրվեցան շինությունները և կորսույան մատնվեցան ամբողջ ձեռագրերը»<sup>93</sup>։

Արգելանից վանք, ապա Տեր Հուսկան ուղղու վանք. — «Տեր Հուսկան որդիու վանուց ձեռագրերն ալ թերկի զավարի ոյսուցերու եկեղեցիներու ձեռագրերու նետ ամբողջապես կորսույան մատնվեցան»<sup>94</sup>։

Մեծոփա վանք. — «Իսկ վանք մնացած 100 կտորեն ավելի ձեռագրերը 1915 թվականի ապրիլի Քաջը բրունյաց զավարի կոտորածին մնաց բյուրդերու ձեռք և այդ ձեռք ալ կորսույան մատնվեցան»<sup>95</sup>։

Մեծանշելազորդ վանք. — «Վանքի ամբողջ հնությունները գրչագրերով միասին թալանվեցավ, նույն վիճակը ունեցավ և Քաջը բրունյաց Արծվարերդ վանք»<sup>96</sup>։

Ահա շատ համառոտ Վասպուրականի մեր ձեռագրական միայն մի քանի կենտրոնների

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 11ա—բ։

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 7ա։

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 14ա։

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 14ա։

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 15ա։

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 16ա։

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 18բ։

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 18բ։

ողբերգական վախճանի մասին։ Մակայն ուսպուրականում ոչ գիտի ինչքան ձեռագրերը ոչնչացան լուռ և անարձագանք...։ Դարձյալ Վասպուրականի ձեռագրերի մի մասը փրկող Հյուսիան վարդապետը խոսում է նույն Վասպուրականում հայերեն ձեռագրերի մեծ թվի առկայության մասին։ «Վասպուրականի ինչպես շեն եղած բոլոր վանքերու մեջ, նույնպես բոլոր եկեղեցիներու մեջ չկար եկեղեցի մը, կամ գյուղ մը, ուր 10—20—30 Կտոր ձեռագրեր զգտնվեին, նույնիսկ անհատներու քով իրենց տուներու մեջը փաթթված իրրեն նվիրական սրբություն հարգվեին կպահպանվեին»<sup>97</sup>։

Վանքերից հրաշքով այրվելուց փրկված ձեռագրերից առավել բախտավորները, որոնք անշուշտ մանրանկարներով զարդարված էին ու բովանդակությամբ մեծ մասամբ Ավետարաններ, թուրք և այլազգի սպաներից Եվրոպա և ալյուր տարվեցին վաճառվելու։

Ավագեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանը, անվանի գերմանացի հայագետ պրոֆ. Ցուղեթ Մարկվարտի մասին իր գրած ուշագրավ հուշերում, հիշատակում է նաև մի թուրք սպայի մասին, որ զալով թեղլին, ներկայացել էր Հիշյալ հայագետին, առ ի գնահատություն ցույց տալով նրան 4—5 հայերեն գրագրեր, որոնց մեջ կային հրաշալի մանրանկարներով զարդարված երկու մազաղաթյա մատյաններ։ Այդ ձեռագրերը, թուրք սպայի հայտարարության համաձայն, ինք հափշտակել էր Վանի մոտ գտնվող մի գյուղաքաղաքի վանքից։ Նա գետնին թափված բազմաթիվ գրքերից մի 10 գիրք էլ ինք է վերցրել, որից 4—5-ը բերել է վաճառելու Բեղլինի National Bibliothek-ին։ Մեծանուն գերմանացի հայագետն ու հայամարը մեծ ընդգումով վերցրել էր թալանող թուրք սպայի ձեռքից հայ ժողովրդի զարավոր ստեղծագործության արգասիքը հանդիսացող այդ գրչագրերը և ապա իր մարդկանց կարգադրել էր տանել Վիեննա ու հանձնել հայկական մատենադարանին<sup>98</sup>։

Սրանք սակայն բացառություններ էին, իսկ մեր տաղարաններն ու պատմագրերը, բժշկարաններն ու ճշգրիտ գիտությունների վերաբերյալ ձեռագրերը, որոնք, որպես կանոն, համարյա զուրկ են մանրանկարներից, անշուշտ նույն տիսուր ճակատագիրը վիճակվեց, ինչպես Արևմտյան Հայաստանի ձեռագրական կարևոր կենտրոններում պահված-

ներին։ Մեր անգին գրչագրերով խուժանը անխնա կերպով բաղնիքները տարացրեց և կամ շուկաներում իրեր մթերքները փաթաթելու ծրար օգտագործեց։

Վասպուրականը, ինչպես իր հուշարձան-ների թվով, այնպես էլ իր ստեղծած գրչագրերով, ամենայն հավանականությամբ ամենամեծ կենտրոնը հանդիսացավ մեր գրչության պատմության մեջ։ Զնայած, որ նա, ինչպես նշեցինք, ամենաբախտավորը եղավ մեր ձեռագրական բոլոր կենտրոններից, քանի որ նրա ձեռագրական ժառանգության կարևոր մի մասը փրկվեց և այժմ մեր վերածնված հայրենիքի Մատենադարանում ոչ միայն իր խաղաղ գոյատևման հանգիստ հանգրվանն է գտնել, այն զարձել է մեր գիտնականների ուսումնասիրության առարկան, բայց և այնպես նշված փաստերից կարելի է նաև եզրակացնել, որ առավել մեծ շափերի են հասել նաև Վասպուրականում մեր ձեռագրական կորուստները։

Ինչպան էլ շափականցված համարելու լինենք Հովհաննես վարդապետ Հյուսիանի այն կարծիքը, թե Վասպուրականում տասնյակ հազարավոր ձեռագրեր են եղել և ինք կարողացել է փրկել նրանցից միայն երկու հազար յոթանասունը<sup>99</sup>, այնուամենայնիվ վերոհիշյալ միանգամայն խիստ արժեքավոր, սակայն լրիդ վինելուց շատ հեռու եղող փաստերն էլ հիմք են մեջ տալիս ասելու, որ Վասպուրականում մեր կորցրած ձեռագրերի թիվը շատ ավելի է եղել քան փրկվածներինը, որ շատ հավանական են մեր հայտնի ձեռագրագիտների՝ Գրքաբին Ակադեմիկոս Հովհաննեսի կովկասի Հայտական կարծիքները, որ Վասպուրականի ձեռագրերի միայն փոքր մի մասն է, որ հնարավոր եղավ փրկել։

Վասպուրականում մեր ձեռագրական կորուստների թիվը հավանաբար հասնում է առնվազն մի քանի հազար գրչագրի։

<sup>97</sup> Մաշտոցի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացակների ֆոնդ, № 92, էջ 6աւ Մինչև 1960 թվականը Վասպուրականից Մատենադարանում մուտք է գործել ոչ թե 2070, այլ միայն 1473 ձեռագրի։

<sup>98</sup> «Հայոց», Անթիկիաս, 1949 թ., էջ 7—9;

<sup>100</sup> Հ. Չ. Ոսկյան, «Վասպուրականի հայությունը և կամաց գործերը», Վահագան, 1947, էջ 1086.

Տանըություն։ — Այստեղ ընդհատում ենք սույն արժեքավոր ուսումնասիրության հրատարակությունը։ Արևմտյան Հայաստանի այլ գավառների և վանքերի ձեռագրական կորուստների մասին ուսումնասիրությունը հրատարակվել ավելի ուշ—Խմբագրություն «Եղմածին» ամսագրի։

97 Անտիպ ձեռագրացակների ֆոնդ, № 92, էջ 6աւ,

98 «Եղմածին», 1965, փետրվար—մարտ—ապրիլ, էջ 38,